ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Գևորգ Ղուկասյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *Սփյուռք, սփյուռքի բնորոշիչներ, էթնիկ լոբբինգ, լոբբինգի ինստիտուտ, Եվրոպայի հայկական լոբբի:*

ՄՈՒՏՔ

Ներկայումս, պայմանավորված գլոբալացման շարունակական գործընթացով, աշխարհում նկատվում է էթնիկ համայնքներում ապրողների թվի կտրուկ մեծացում: Այսպես, եթե 1960-ական թթ. աշխարհում կար մոտ 75,5 միլիոն մարդ, որ ապրում էր սեփական հայրենիքից դուրս, ապա 2000 թ.՝ 176,6 միլիոն, 2009 թ.՝ 213,9 միլիոն[1], իսկ 2019 թ.՝ 272 միլիոն[2]: Հետևաբար միգրացիոն տենդենցներն ազդում են նաև սփյուռքերի քաղաքական բազմաշերտ դերակատարության վրա և պարտադրում են նոր զարգացումների դիտանկյունից անդրադառնալ դրանց: Որպես կանոն, **սփյուռքերի քաղաքական դերակատարության հիմնական կազմակերպված արտահայտչաձևը էթնիկ լոբբինգի ինստիտուտն է:**

Սույն աշխատանքի հիմնական նպատակն է վեր հանել և ակադեմիական քննարկման նյութ դարձնել Արևմտյան Եվրոպայում հայկական լոբբինգի ընդհանուր վիճակը, դրա ազդեցությունը «հայրենիք-սփյուռք», «սփյուռք-հայրենիք» և «հայերնիք-սփյուռք-ընդունող երկիր» եռաչափության և դրանց փոխհարաբերությունների վրա: Հընթացս կներկայացվի Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, ի մասնավորի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուցիոնալ ու բովանդակային ներուժը, անդրադարձ կկատարվի արդի միջազգային զարգացումներում լոբբինգի ինստիտուտի և հատկապես էթնիկ լոբբինգի զարգացմանը, պահանջարկի մեծացմանն ու ազդեցության շրջանակի ընդլայնմանը: Եվրոպայում Հայկական էթնիկ լոբբինգի ընդհանուր արդյունավետությանը և ՀՀ-ԵՄ հարաբերություններում եվրոպահայ լոբբիստական կազմակերպությունների դերին վերաբերող հարցերը նույնպես սույն աշխատանքում քննարկման նյութ են դարձել: Վերոգրյալը կիրականացվի սփյուռքերի և էթնիկ լոբբինգի ինստիտուտի վերաբերյալ առկա գիտական գրականության ետնապատկերի վրա՝ ի թիվս այլնի հատկանշելով հայկական սփյուռքի գիտական դասակարգման խնդիրը և դրա ոչ միանշանակության հարցը:

Քաղաքական գիտության մեջ սփյուռքերին վերաբերող ուսումնասիրությունները ընդհանուր առմամբ սկսվեցին նախորդ դարի 80-90-ականն թթ.: Թեև այդ ուսումնասիրություններն էականորեն առնչվում էին նաև սփյուռքերի կողմից հայրենի պետությունների շահերի պաշտպանության հիմնահարցերին, այնուամենայնիվ էթնիկ լոբբինգի, իբրև քաղաքական գործընթացի ինստիտուտի, ուսումնասիրությունները հիմնավորապես խթանվեցին լոբբինգի ամբողջական ինստիտուտի ուսումնասիրությունների շրջանակներում: Հետազոտողներից Թ. Լայնը և Ջ. Մաքսվելը լոբբիստական կազմակերպությունները ըստ գործունեության ուղղվածության տարանջատում են հետևյալ կերպ. **քաղաքական**, **սոցիալական**, **տնտեսական**, **տարածաշրջանային**, **օտարերկրյա-էթնիկական** (ճնշման խմբեր) և **հատուկ**[3]: Այսինքն, էթնիկ լոբբինգի ուսումնասիրությունն ի սկզբանե ենթադրում է միջգիտակարգային մոտեցումների անհրաժեշտություն՝ հատկապես սփյուռքագիտության և քաղաքական գիտության սերտ փոխգործակցությամբ: Այնուամենայնիվ կարծում ենք, որ Լայնի և Մաքսվելի առաջարկած մոդելը էթնիկ լոբբիստական խմբերի մասով որոշակիորեն խնդրահարույց է, որովհետև այդ խմբերը հեղինակների կողմից

** Հոդվածը ներկայացվել է 22.04.2020 թ., գրախոսվել՝ 23.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Trends in total migrant stock: The 2009 revision, http://esa.un.org/migration

[2] Տե՛ս The number of international migrants reaches 272 million, continuing an upward trend in all world regions, says UN, https://www.un.org/development/desa/en/news/population/international-migrant-stock-2019.html

[3] Տե՛ս Thomas P. Lyon, John W. Maxwell, "Astroturf: Interest group Lobbying and Corporate Strategy". Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, Boston 2004.

սահմանվում են որպես «օտարերկրյա» լոբբիստական խմբեր: Խնդիրն այն է, որ էթնիկ լոբբիստական խմբերը հաճախ ներկայանում են, որպես համայնքային կազմակերպություններ (grassroots organization), որպես կանոն այդ կազմակերպությունների անդամներ են հանդիսանում տվյալ երկրում ծնված և գործունեություն ծավալող քաղաքացիներ, որոնք ընդամենը չեն պատկանում տվյալ պետության տիտղոսակիր էթնոսին: **Կարծում ենք, որ տիտղոսակիր էթնոսին պատկանելության բացկայությունը բավարար հանգամանք չէ, էթնիկ լոբբիստական կառույցները սահմանել իբրև «օտարերկրյա»:** Այնուամենայնիվ, ընդգծենք, որ էթնիկ լոբբիստական խմբերը լոբբինգի բազմաշերտ ինստիտուտի մի մասն են կազմում, և այս ոլորտում առկա թեկուզ և սակավաթիվ հետազոտությունները պայմանավորված են մի կողմից սփյուռքերին վերաբերող խնդիրների ուսումնասիրություններով, մյուս կողմից՝ լոբբինգի ինստիտուտի զարգացումն ուսումնասիրող քաղաքական գիտության ձեռքբերումներով:

Վերոգրյալից ենթադրվում է, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտին վերաբերող ուսումնասիրությունների արժանահավատության և ակադեմիական արժեքի ապահովման համար անհրաժեշտ է էթնիկ լոբբինգի ինստիտուտի ուսումնասիրությանը մոտենալ միջգիտակարգային մակարդակում, մանավանդ հայկական էթնիկ լոբբինգի ուսումնասիրության դեպքում, քանի որ վերջինս, մի կողմից էապես ազդվել է հայկական սփյուռքի ներքին զարգացումներով ու փոփոխություններով, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի անկախության վերականգնմամբ, ղարաբաղյան հիմնախնդրով՝ միաժամանակ իր վրա կրելով հայկական սփյուռքի քաղաքական և կազմակերպական ձևավորման հիմնական պատճառի՝ ցեղասպանության ազդեցության կնիքը:

Պայմանավորված իր բազմաշերտությամբ, բարդ կազմությամբ ու զարգացման դինամիկայով՝ «սփյուռք» հասկացության վերաբերյալ վերջնական սահմանում, որը կբավարարի խնդրո առարկային առնչակից ողջ գիտական հանրույթի սպասելիքները՝ չկա: Այնուամենայնիվ նախընթաց տասնամյակների ընթացքում սփյուռքի վերաբերյալ արժեքավոր աշխատանքներ են հրատարակվել, որոնք թեև վերջնականորեն չեն ձևավորել սփյուռքի՝ միարժեքորեն ընդունված սահմանում, այնուամենայնիվ տեսական հետազոտությունների առումով չափազանց կարևոր են, մանավանդ համեմատական վերլուծության և դրանց համալիր կիրառման տեսանկյունից:

Ի. Լոշկարյովը 2017 թվականին հրատարակված իր «Սփյուռք հասկացության էվոլյուցիան քաղաքական գիտության մեջ» հոդվածում առաջարկում է սփյուռքի սահմանման և բնորոշման մոտեցումները դասակարգել ըստ հետևյալ երեք խմբերի[1]՝

1) դասական (Վ. Սաֆրան, Գ. Շեֆֆեր, Ռ. Կոհեն),
2) կոնստրուկտիվիստական (Ռ. Բրուբեյքեր),
3) կոստմոդեռնիստական (Պ. Գիլրոյ, Ջ. Քլիֆորդ):

Դասական մոտեցման դեպքում շեշտը դրվում էր սփյուռքի էտալոնային մոդելներով ուսումնասիրությունների վրա, ինչի ընթացքում կիրառվում էր էտալոնային սփյուռքի ձևավորման պատմական փորձը[2]:

Սփյուռքերի բնորոշման ու սահմանման դասական մեթոդը ենթադրում էր սահմանում և բնորոշում՝ առանց տեսական դատողությունների մեջ խորանալու և առանց հատուկ քաղաքագիտական ու միջգիտակարգային հավելյալ ուսումնասիրությունների:

Կոնստրուկտիվիստական մեթոդը գիտական հետաքրքրության օբյեկտ, որպես այդպիսին, դիտում է ազգը և ազգայնականությունը, ինչպես նաև սփյուռքի ձևավորման գործընթացը:

Իրենց հերթին պոստմոդեռնիստները կարծում են, որ սփյուռքը կրողն է մի շարք հակասությունների՝ կենտրոնացում և գլոբալացում, արմատավորվածություն և վերաբնակեցում, փոփոխականություն և կայունություն: Այս մոտեցման համաձայն սփյուռքը կապող օղակ է անցյալի

[1] *Տե՛ս Лошкарёв И., Эволюция понятия «диаспора» в политической науке, «Этносоциум и межнациональная культур», М., 2017, № 4 (106), с. 70-78.*

[2] *Տե՛ս Թորոսյան Տ., Սարաղյան Մ., Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Ե., 2017, էջ 19.*

և ներկայի, ծագման երկրի և ընդունող երկրի միջև[1]: Ուստի այս մոտեցման ակադեմիական առաջնահերթություններն ամենահամապատասխանն են սփյուռքերի և ուղղակիորեն առնչակից հիմնախնդիրների ուսումնասիրության արդի պահանջներին:

Ի. Լոշկարյովի կողմից առաջարկող մոդելն ինքնին խոցելի է: Բանն այն է, որ սփյուռքերի ուսումնասիրությունը հընթացս զարգացող գիտաճյուղ է, որտեղ նաև անհրաժեշտ են միջգիտակարգային ուսումնասիրություններ, առաջարկվող լուծումների, սահմանումների ու բնորոշումների վերաբերյալ առկա չէ ձևավորված ակադեմիական վերջնական կարծիք, բազմաթիվ հեղինակներ, օրինակ, Գ. Շեֆֆերը, տարիների ընթացքում հենց իրենք են կատարել սեփական ակադեմիական կարծիքի փոփոխություններ, հետևաբար դեռևս վաղ է փորձել վերջնականապես դասակարգել սփյուռքի բնորոշիչներն ու սահմանումները: Այնուամենայնիվ նրա առաջարկած տարբերակը, կարող է օգտակար լինել առկա գրականության համեմատական վերլուծության և բովանդակային դասակարգման տեսանկյունից:

Սփյուռքերի հետազոտողներից Վ. Սաֆրանն առանձնացնում է սփյուռքերի հետևյալ բնութագրիչներ՝ ժողովրդի հեռացում հայրենիքից, հայրենիքի վերաբերյալ հավաքական հիշողության պահպանում, ընդունող հասարակության կողմից ամբողջական ընդունման բացառման գիտակցում, պայմանների բարելավության դեպքում՝ հայրենիք վերադարձի հանձնառության պահպանում, հայրենի երկրի, իբրև միակ ճշմարիտ տան գիտակցում, հայրենիքի վերականգնմանն ու պահպամանը, ապահովությանն ու բարգավաճմանը հավաքական կերպով նվիրում, հայրենիքի հետ անձնապես կամ միջնորդավորված շարունակական կապի ապահովում[2]:

Իր հերթին Ռ. Կոհենն առաջարկում է Վ. Սաֆրանի ներկայացրած բնորոշիչները համալրել ևս չորսով՝ առավել համընդգրկուն արդյունք ունենալու համար: Ռ. Կոհենն առաջարկում է նկատի ունենալ աշխատանքային և առևտրային գործունեության արդյունքում ձևավորված սփյուռքը, հաշվի առնել ժամանակային այն ընդգրկումը, որի արդյունքում էթնիկ համայնքը վերածվում է սփյուռքի, ներառել սփյուռքի և վերջինիս շրջանակներում ձևավորված ինքնության առանձնահատկությունները, ինչպես նաև ընդունել, **որ սփյուռքը ոչ միայն հավաքական ինքնություն է ձևավորում, այլև ունի ընդհանուր ինքնություն այլ երկրներում ապրող նույնաէթնիկ խմբերի հետ[3]:**

Գ. Շեֆֆերն առանձնացրել է թվով երեք բնորոշիչ, որոնց ամբողջությունը կարող է դիտվել իբրև սփյուռքի սահմանում[4]. 1. Սփյուռքի հավաքական ինքնության պահպանում և զարգացում, 2. հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից զատ ներքին կազմակերպվածության առկայություն, 3. հայրենիքի հետ իրական և նշանակալի փոխհարաբերությունների առկայություն: Ավելի ուշ, Շեֆֆերն առաջարկել է սփյուռքերի նոր, առավել ամբողջական դասակարգումներ ևս[5]:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով սույն աշխատանքի առջև դրված խնդիրների շրջանակը՝ անհրաժեշտ ենք համարում սահմանափակվել սփյուռքերի սահմանումների և դասակարգումների վերաբերյալ վերոգրյալի քննարկմամբ:

Ինչ վերաբերում է հայկական սփյուռքին, ապա հիշյալ սահմանումների և բնորոշումների հետ մեկտեղ պետք է նախ նկատի ունենալ այն հանգամանքը, որ հայկական սփյուռքը, որպես այդպիսին, միատարր երևույթ չէ, և ինքնին չի կարող հավակնել մեկ գիտական բնորոշման, որովհետև հայկական սփյուռքի համայնքները իրարից տարբեր են, տարբեր են նաև հասարակական, սոցիալ-տնտեսական և քաղաքակրթական այն տարածքները, որտեղ ձևավորվել են հայկական համայնքներ:

---

[1] *Տե՛ս նույն տեղում.*

[2] *Տե՛ս Safran W., Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, Diaspora, No. 1, Toronto 1991, pp. 83-99, p. 83.*

[3] *Տե՛ս Cohen R., Global Diasporas: An Introduction. Second edition, Routledge, 2008, p.7.*

[4] *Տե՛ս Թորոսյան Տ., Սարադյան Մ., նշվ. աշխ., էջ 28.*

[5] *Տե՛ս Sheffer G., The Diaspora Phenomenon in the 21st: Ideational, organizational and Behavioral challenges, published in "Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-Level Politics of Diaspora and Transnational Identity", Nevada, 2007.*

Պատահական չէ որ Խ. Թոլոյանը գտնում է. «Նախկինում մենք գործածում էինք սփյուռք եզրույթը՝ նկարագրեու համար հրեաների, հույների, հայերի ցրվածությունն աշխարհով մեկ, այժմ այն ունի առավել մեծ իմաստաբանական տիրույթ՝ ներառելով ներգաղթյալներին, ոչ տիտղոսակիր քաղաքացիներին, փախստականներին, ժամանակավոր աշխատուժին, աքսորյալներին, առևտրային և էթնիկ համայնքներին և այլն»[1]:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Եվրոպայում հայկական սփյուռքի համայնքները ենթակա չեն միարժեք բնորոշման, առավել ևս՝ դասակարգման: Այդ համայնքների միջև տարբերություններ կան՝ սկսած կազմավորման գործընթացից մինչև արդի սոցիալական, հասարակական կամ քաղաքական ակտիվություն: Հետևաբար Եվրոպայում հայկական էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը հասկանալու համար կարևոր է՝ մի կողմից չգերագնահատել լոբբիստական գործունեության արդյունավետության համար կոնկրետ համայնքի դերը, մյուս կողմից՝ չթերագնահատել այն, քանի որ սփյուռքյան համայնքների լոբբիստական գործունեությունը պայմանավորող գործոնները խիստ բազմաշերտ են՝ կախված ինչպես համայնքի կազմակերպական վիճակից, այնպես էլ ընդունող երկրի օրենսդրահիրավական առանձնահատկություններից, քաղաքական համակարգից ու այս ոլորտում առկա ավանդույթներից:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵՏՆԵՐԸ

Համաձայն նախկինում ՀՀ կառավարության կառուցվածքում գործող սփյուռքի նախարարության տվյալների՝ ներկայումս Եվրոպական աշխարհամասում ապրող հայերի ընդհանուր թիվը գերազանցում է 1.670.000-ը[2]: Հայության առավել խոշոր խմբեր են բնակվում Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում և այլուր: Ինչ վերաբերում է համայնքային կազմակերպություններին, ապա Արևմտյան Եվրոպայում դրանց ընդհանուր թիվը 153 է, Հյուսիսային Եվրոպայի և Մերձբալթյան երկրների հայկական համայնքներում՝ 31, Արլ. Եվրոպայի և Բալկանյան երկրներում՝ 110[3]:

Սույն աշխատանքում մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներում պետք է նկատել, որ այս կամ այն հայկական համայնքային կազմակերպության նույնականացմումը որպես լոբբիստական որոշակի դժվարություններ է ենթադրում, բացառությամբ մի քանի դեպքերի: Խնդիրն այն է, որ տարբեր երիրների ներքին օրենսդրահիրավական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լոբբիստական խմբերի գործունեության համար: Ընդհանուր առմամբ, ուղղակի լոբբիստական կազմակերպությունների քանակը շատ փոքր է: Նկատի ունենք այնպիսի կազմակերպությունները, որոնց նպատակն է իրականացնել հայկական շրջանակների և Հայաստանի Հանրապետության շահի պաշտպանություն՝ օգտագործելով էթնիկ լոբբինգի ինստիտուտին վերաբերող կոնկրետ գործիքակազմ:

Եվրոպայում հայկական էթնիկ լոբբիստական գործունեություն իրականացնող կազմակերպությունների բնույթը, ցանցն ու գործունեության առանձնահատկությունները, ինչպես նախ տեխնոլոգիական գործիքակազմերը հասկանալու ու դրանց տեղորոշելու համար կատարենք էթնիկ լոբբիստական կոռւյցներին վերաբերող որոշ բնութագրումներ:

Էթնիկ լոբբիստական գործիքակազմի կիրառումը ենթադրում է այնպիսի վիճակ, երբ փորձ է արվում ազգային, մշակութային կամ կրոնական համախմբան միջոցով ճնշումներ գործադրել հյուրընկալող երկրի պետական իշխանության թևերի, տարածքային և տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների վրա՝ ի շահ իրենց հայրենի պետության:

Որպես կանոն, էթնիկ լոբբիստական խմբերն իրենց հայրենի երկրների հետ ունեն միջնորդավորված կամ ուղղակի կապեր:

Էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունն առավել հաջող է նաև այն պատճառով, որ նրանք հաճախ ուղղակի կամ անուղղակի հովանավորվում են տվյալ պետության ղեկավարության կողմից և հաճախ կարող են հանդես գալ որպես գործիք որևէ այլ՝ երրորդ պետության դեմ:

---

[1] *Տե՛ս Tololyan Kh., The Nation-State and its others: In Lieu of a Preface, Diaspora, 1991, 1, 1 p. 4.*

[2] *Տե՛ս Հակոբյան Հ., Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Ե., 2018, էջ 97-120:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

Այս առումով, կարող ենք պնդել, որ էթնիկ լոբբիստական խմբերն իրենց ուրույն տեղն ունեն նաև հյուրընկալ պետության արտաքին քաղաքականության իրականացման ծիրի մեջ՝ իրենց քաղաքականության իրականացման ընթացքում՝ ըստ հարկի, սպասարկելով նաև հյուրընկալ պետության արտաքին քաղաքական շահը[1]:

Որպես գործունեության առանձնահատկություն, էթնիկ լոբբիստական խմբերի համար կարելի է դիտարկել հետևյալը.

- հիմնահարցի ձևակերպում, երբ լոբբիստական խմբերը փորձում են ձևակերպել որևէ հիմնական խնդիր և այն դարձնել հյուրընկալ պետության բարձրագույն իշխանության քննարկման և որոշման ենթակա հարց,
- տեղեկատվության ապահովում, երբ էթնիկ լոբբիստական խմբերը զգալի աշխատանքներ են կատարում անհրաժեշտ տեղեկատվության հայթայթման, վերլուծության, փորձագիտական կարծիքի վերածելու և դրանք իշխանության մարմիններին տրամադրելու համար,
- Քաղաքականության մոնիթորինգ, երբ էթնիկ լոբբիստական խմբերը մանրամասն մոնիթորինգի են ենթարկում իշխանությունների նախընթաց ու ներկա գործունեությունը և ըստ անհրաժեշտության կիրառում դրանք[2]:
- Տեխնոլոգիական առումով, էթնիկ լոբբիստական գործունեության առանձնահատուկություններ կարող են դիտվել հետևյալը.
- հասարակական կարծիքի համախմբումը՝ տարբեր քաղաքացիական-հասարակական ձեռնարկների, իշխանություններին ուղղված դիմումների, ստորագրահավաքների, քարոզչական ակտիվ գործունեության և դատական գործընթացների նախաձեռնման միջոցով,
- ընտրարշավային գործիքակազմ, որը ներառում է ընտրություններին անհատական կամ խմբային մասնակցության, դրանց ֆինանսավորման կամ աջակցման տեխնոլոգիաներ,
- պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառում, երբ լոբբիստական կազմակերպություններն օրենքով իրենց վերապահված հնարավորությունների շրջանակում կարողանում են ապահովել մասնակցայնություն պետական ապարատի աշխատանքներում, ինչը տվյալ դեպքում ենթադրում է տարբեր իրավական ակտերի, նախագծերի և դրանց քննարկումների կազմակերպում, իշխանության մարմինների համար խորհրդատվությունների իրականացում, փորձագիտական կարծիքների տրամադրում և այլն,
- ոչ պաշտոնական կապերի գործադրում, ինչը ենթադրում է տարբեր գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների, սեմինարների և նմանաբնույթ այլ միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև անհատական հանդիպումներ և անձնական կապերի ստեղծում,
- պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգեբանական ճնշման գործադրում, ինչն ի թիվս այլնի՝ կարող է արտացոլվել նամակների, հեռագրերի, զանգերի, հանրային միջոցառումների տեսքով[3]:
- Լոբբինգի տեխնոլոգիաներից արևմտյան աշխարհում շատ հայտնի է **«Lobbing the grassroots»**: Այն իրենից ներկայացնում է հանրային քաղաքականության մի համալիր գործիքակազմ, որի ընթացքում լոբբիստը դիմում է ոչ թե պետական հաստատություններին, այլ հասարակության ներկայացուցիչներին, իշխանության այս կամ այն որոշման վրա ազդելու ընդունակ սովորական քաղաքացիներին: Լոբբինգի այս տեխնոլոգիան, ըստ էության, հասարակական ներուժի հնարավոր գեներացում է կոնկրետ խնդիր լուծելու համար[4]:

Ինչպես վերը նշվեց, սփյուռքի լոբբիստական գործունեության վերհանման ակադեմիական խնդիրը ենթադրում է միջգիտակարգային համալիր մոտեցում: Համադրելով սփյուռքերի առաջացման ու գործունեության բնութագրիչները, էթնիկ լոբբինգի ինստիտուտի առանձնահատկություններն ու տեխնոլոգիական օրինաչափությունները՝ փորձենք վեր հանել Արևմտյան

---

[1] *Տե՛ս Ղուկասյան Գ., Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էության շուրջ, «Հանրային կառավարում», 2, Ե., 2019, էջ 184-193:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս Lindsay J., "Getting Uncle Sam's Ear", Council of Foreign Relations, Winter 2002.*

[4] *Տե՛ս Նահապետյան Հ., Հայ համայնքն ԱՄՆ-ում, Ե., 2010, էջ 91:*

Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի մոտավոր պատկերը, մասնավոր գործառութային առանձնահատկություններն ու տեխնոլոգիական մոտեցումները:

Վերոհիշյալ առաջադրանքի կատարման համար առաջարկում ենք եվրոպական երկրներում գործող հայկական համայնքային այն կազմակերպություններին, որոնք այս կամ այն կերպ իրենց գործունեության արդյունքում նպաստում են հայկական պետությունների շահի սպասարկմանը, պայմանականորեն դիտել երկու հարթության մեջ՝ **լոբբիստական** և **մերձլոբբիստական**, միևնույն ժամանակ, որպես մերձլոբբիստական կազմակերպություններ ընդգծել տեղական-համայնքային և քաղաքական կազմակերպությունների դերն ու գործունեությունը: Առաջարկվող բաժանումների կազմակերկական ընդհանրություններին և միջոլորտային փոխներգրավվածությանը կանդրադառնանք հընթացս:

Հիշյալ առանձնացումը նպատակահարմար ենք համարում հայկական տարաբնույթ կազմակերպությունների ցանցային դրսևորման այն պայմաններում, երբ դրանցից որոշներն իրականացնում են ուղղակի դասական լոբբիստական գործունեություն, իսկ մյուս, հիմնական մասն իրենց առօրյա գործունեությամբ ենթադրում են էթնիկ լոբբինգի ինստիտուտին առնչվող գործառութային և տեխնոլոգիական շերտեր, սակայն իրենց բնույթով, կանոնադրական նպատակներով ու առաքելությամբ լոբբիստական կազմակերպություններ չեն: Եվրոպայում հայկական լոբբիստական ակտիվության վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել առաջարկվող երկու հարթությունների համահավաքը:

Մերձլոբբիստական կազմակերպություններ կարող են դիտվել տեղական համայնքային կազմակերպությունները, քաղաքական կազմակերպությունները, ինչպես նաև եկեղեցական, բարեգործական, մշակութային, կրթական, լրատվական, մարմնակրթական, մասնագիտական ընկերակցությունները և այլ կազմակերպպությունները:

Տեղական-համայնքային կազմակերպությունները կամ «հայ համայնքները» հիմնականում սահմանափակվում են համայնքային-ազգային կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների լուծմամբ: Այսպիսի միավորումների ինստիտուցիոնալ կապը հայրենիքի հետ բավականին թույլ է, դրանք սովորաբար տեղավորվում են «սփյուռք-ընդունող երկիր» հարթությունում և իրականացնում են համայնքի անդամների սոցիալական, մշակութային կյանքի իրացմանը վերաբերող միջոցառումներ:

Քաղաքական կազմակերպություններն ըստ էության ավանդական հայկական երեք կուսակցություններն են՝ Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Հայ յեղափոխական դաշնակցություն և Ռամկավար ազատական կուսակցությունները:

Մերձլոբբիստական կազմակերպությունների մեկ այլ խումբ կարող են համարվել Թեքեյան մշակութային միությունը, Հայ օգնության միությունը, Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Հայաստան համահայկական հիմնադրամը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը, Պողոսյան հիմնադրամը:. Այս շարքը կարելի է շարունակել, սակայն սույն աշխատանքի այս հատվածում առավելապես նպատակ ունենք ցուցելու մեր կողմից առաջարկվող տարաբաժանման ընդունելի տրամաբանությունը:

Նույն տրամաբանությամբ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եվրոպահաստատ թեմերն ու այլ հաստատությունները, ինչպես նաև Մխիթարյան Միաբանության Վենետիկի և Վիեննայի կենտրոնները լավագույն օրինակներեն այն իրողության, որ հայկական սփյուռքի՝ Հայաստանի Հանրապետության շահերի ուղղակի կամ անուղղակի սպասարկման գործառույթները ավելի են, քան խնդրի զուտ քաղաքական կողմը:

Այս հաստատությունների դիտարկումը իբրև մերձլոբբիստական կազմակերպություններ՝ հնարավորություն կտա իրենց կանոնադրական գործառույթների իրացմանը մեկտեղ, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռաչափության մեջ դիտել այդ կազմակերպությունների կողմից լոբբիստական գործունեությանը բնորոշ որոշակի գործիքների կիրառման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Վերջինս կարևոր հանգամանք է՝ բացառելու այս կազմակերպությունների նույնացումը լոբբիստական կառույցներին, քանի որ այդ պարագայում գործելու

են կազմակերպաիրավական գործունեությանը, օրենսդրական հնարավորություններին վերաբերող այլ կարգավորումներ, որոնք կարող են կաշկանդել հիմնականում բարեգործական կազմակերպությունների աշխատանքը, հետևաբար այս դեպքում լոբբիստական գործունեությանը բնորոշ առանձին գործառույթների իրականացումը հնարավոր է իրականացնել (իրականացվում է) որպես հիմնական գործունեությունից ածանցվող միջոցառումներ:

Կարևոր հանգամանք է հայկական սփյուռքի «մերձլոբբիստական» կազմակերպությունների՝ ընդունող երկրներում հիմնադրված լինելու հանգամանքը, որպես այդ երկրի քաղաքացիների կողմից հիմնադրված քաղաքացիական հասարակության ինստիտուտների (grassroots organization)[1]: Այս դեպքում հայկական կազմակերպությունները խուսափում են Հայաստանի Հանրապետության կողմից իր իսկ շահերին ծառայելու համար այլ պետության տարածքում հիմնադրված լինելու վերաբերյալ հնարավոր մեղադրանքներից կամ հավելյալ խնդիրներից:

Եվրոպայում հայկական լոբբիստական գործունեությունն ընդգրկում է երեք հիմնական մակարդակներ. Համաեվրոպական մակարդակ (միջազգային և ինտեգրացիոն տարբեր կազմակերպությունների կենտրոնական գրասենյակների հետ աշխատանք), առանձին պետությունների մակարդակ (պետական իշխանությունների հետ հարաբերություններ) և համայնքային մակարդակ (ներհամայնքային կարիքների բավարարման և կազմակերպվածության բարձրացման մակարդակ):

Եվրոպայում դասական իմաստով իբրև լոբբիստական կազմակերպություններ առաջարկում ենք դիտել Եվրոպայի Հայ դատի կենտրոնական հանձնախումբն ու դրա գրասենյակը [European-Armenian Federation of Justice and Democracy (EAFJD)] և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը [Co-ordination Council of Armenian organisations of France (CCAF)]:

Եվրոպայի Հայ դատի կենտրոնական հանձնախումբ/գրասենյակ: Հայ դատի կառույցը հիմնվել է ՀՅԴ-ի կողմից 1944 թ. Նյու Յորքում, այնուհետև տարածվել բազմաթիվ երկրներում: Եվրոպայի Հայ դատի գրասենյակը հիմնվել է 2001 թ., սկզբում այն տեղակայված էր Փարիզում, այնուհետև, հաշվի առնելով ներեվրոպական քաղաքական գործընթացների և վարչական ապարատի կենտրոնացումը Բրյուսելում, տեղափոխվեց այնտեղ: Ներկայումս Հայ դատի Եվրոպայի գրասենյակը համակարգում է եվրոպական 14 երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերի աշխատանքը, սակայն առավելապես ինքն է նախաձեռնում տարաբնույթ աշխատանքներ:

Կազմակերպության հայտարարված նպատակներն են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, Արցախի ժողովրդի հիմնական իրավունքների պաշտպանությունը, Արցախի հարցի միջազգայնացումը, ինչպես նաև ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացմանը նպաստելն ամենատարբեր հարթություններում՝ սկսած խորհրդարանական դիվանագիտությանն օժանդակելուց մինչև տնտեսական ներդրումների ներգրավումը[2]:

Գրասենյակը հիմնականում կենտրորանում է ղարաբաղյան հիմնախնդրի վրա: Այս առումով գործունեության նպատակն է բարձրաձայնել Արցախի ժողովրդի՝ սեփական ապագան տնօրինելու, ինչպես նաև խաղաղության ու արժանապատվության մեջ ապրելու իրավունքները, ինչպես նաև ճեղքել Արցախի քաղաքական մեկուսացման ադրբեջանական գիծը, նպաստել Արցախի տնտեսական զարգացմանն ու մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը[3]:

Այս նպատակների իրականացման համար գրասենյակը բարձր ինտենսիվությամբ կազմակերպում է տարբեր միջոցառումներ՝ Արցախի բարձրաստիճան ղեկավարության եվրոպական այցեր, եվրոպական պատգամավորների այցելություններ Արցախ, տարբեր սեմինարներ,

---

[1] Բացառություն կարող են կազմել Հայաստան համահայկական հիմնադրամը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերն ու կազմակերպությունները, որոնք սակայն իրենց բնույթով առանձնահատուկ են: Եկեղեցական հաստատությունները գլխավորապես հոգևոր, կրթական, մշակութային կազմակերպություններ են, ամբողջապես ապաքաղաքական և չեն կարող ակնառու քաղաքական հավակնություն ունենալ: Իր հերթին Հայաստան համահայկական հիմնադրամը բացառապես բարեգործական կազմակերպություն է, որը հավելյալ ոլորտներում հետաքրքրություն, որպես այդպիսին, չի ցուցաբերում:

[2] Տե՛ս European Armenian Federation for Justice and Democracy, http://www.eafjd.eu/about.html

[3] Տե՛ս նույն տեղում:

խորհրդաժողովներ, ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ, շնորհանդեսներ և այլն: Այս շրջանակներում Արցախից Բրյուսել են մեկնել տարբեր պատվիրակություններ՝ Արցախի նախագահի, ԱԺ նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի գլխավորությամբ: Գրասենյակի համակարգմամբ իրականացվում են Արցախի Հանրապետության քաղաքացիական հասարակության և պետական համակարգի աշխատակիցների վերապատրաստման և զարգացման ծրագրեր:

Գրասենյակը բարձր ակտիվություն է ցուցաբերում նաև Արցախի համապետական ընտրությունների ընթացքում՝ կազմակերպելով եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների ու պատգամավորների դիտորդական առաքելություններ, որոնց ընթացքում հյուրերը հնարավորություն ունեն գնահատելու Արցախի ընտրական համակարգն ու ժողովրդավարության մակարդակն ընդհանրապես:

Տարբեր մակարդակներում (ապակենտրոն համագործակցություն, ապակենտրոն ճանաչում, խորհրդարանական դիվանագիտություն) Արցախի ճանաչման գործընթացներում մեծագույն նշանակություն ունի հենց այս կազմակերպությունը, որի ակտիվ նախաձեռնողականության շնորհիվ, օրինակ, համապատասխանաբար 2017թ . հոկտեմբերի 18-ին և 20-ին Բելգիայի Թագավորության Ֆլանդրիական և Վալոնական խորհրդարաններում հայտարարվել է Արցախի և Բելգիայի Ֆլամանդրիայի ու Վալոնիայի խորհրդարանների միջև բարեկամության խումբ և շրջանակ ստեղծելու վերաբերյալ պայմանավորվածությունների մասին, ինչպես նաև 2014 թ. հոկտեմբերի 15-ին Եվրոպական Խորհրդարանում ԱՀ անկախության 23 ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառման ընթացքում Արցախի հետ բարեկամության խմբի ստեղծման գործընթացի մեկնարկը:

Հայ դատի Եվրոպայի գրասենյակի ընդհանուր համակարգմամբ գործող 14 հանձնախմբերից, առավել ակտիվ գործունեություն ծավալում են հատկապես Հունաստանի, Շվեդիայի, Ֆրանսիայի, Կիպրոսի, Ավստրիայի, Լեհաստանի հանձնախմբերը:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ: Իրավացիորեն ընդունված է կարծել, որ Ֆրանսիայի հայկական համայնքը սփյուռքի ամենից կազմակերպված համայնքներից է, որն ի թիվս այլնի՝ պայմանավորված է Ֆրանսիայում հայկական հետքի երկարատև գոյությամբ, ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարության առանցքային դեմքերի՝ Ֆրանսիայում հաստատմամբ: Հայերն այստեղ հաստատվել են դեռևս VI դ. սկսած, համայնքի ընդհանուր թիվը ներկայումս շուրջ 700 հազար է, գործում են հայկական հարյուրավոր կազմակերպություններ:

Շուրջ 500 հայկական կազմակերպություններ միավորում է Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը [Co-ordination Council of Armenian organisations of France (CCAF)], որը նաև ակտիվ լոբբիստական գործունեություն է իրականացնում:

Իր հերթին, Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը, որն ըստ էության գործում է CCAF-ի կազմում, ֆրանս-հայկական մեծագույն քաղաքական կազմակերպությունն է, որի նպատակներն են.

1. նպաստել հասարակական իրազեկվածության բարձրացմանն՝ ի պաշտպանություն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի,

2. հայկական համայնքին հուզող հարցերում ազդել Ֆրանսիայի և ԵՄ-ի քաղաքականության վրա,

3. ներկայացնել հայության միասնական տեսակետները պետական քաղաքական տարբեր հարցերի վերաբերյալ՝ ծառայելով իբրև կապ համայնքի և նրա ընտրած պաշտոնյաների միջև:

Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը ամենաակտիվներից է այդպիսի հանձնախմբերի մեջ, ընդ որում, ակտիվությունը չի սահմանափակվում միայն Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններին համակցված գործելով, այլ շոշափում է հայությանն առնչվող հասարակաքաղաքական և սոցիալական կյանքի ամենատարբեր ոլորտներ:

Կարևոր է նկատել, որ վերը քննարկված երկու կազմակերպությունները՝ Եվրոպայի Հայ դատի գրասենյակը և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդն (ՖՀԿՀԽ) ունեն ծագումնաբանական տարբերություններ: ՀԿՀԽ-ն իր դրան անդամակից կառույցները ձևավորվել են Ֆրանսիայում հաստատված հայ համայնքի քաղաքական, սոցիալ-տնտեսական ներուժի և դրանից բխած քաղաքական գործունեության արդյունքում, իսկ Հայ դատի Եվրոպայի Գրասենյակը Բրյուսելում է հաստատվել՝ պայմանավորված Բրյուսելի, իբրև տարածքի քաղաքական նշանակությամբ: Մյուս կողմից Եվրոպայի Հայ դատի գրասենյակի՝ Բրյուսելում հաստատվելուց հետո, վերջին տարիների ընթացքում էականորեն ակտիվացել է Հայ դատի Բելգիայի հանձնախմբի աշխատանքները, ինչը մեծապես պայմանավորված է տեղում Եվրոպայի Հայ դատի գրասենյակի առկայությամբ: Հետևապես ակնհայտ է, որ համայնքի քաղաքական ակտիվությունը էապես ազդում է դրա լոբբիստական գործունեության վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմք ընդունելով Արևմտյան Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, սփյուռքերի ուսումնասիրության, սահմանման ու բնորոշման արդի չափորոշիչները՝ հայկական էթնիկ լոբբինգը պետք է դիտել իբրև բացառապես սփյուռքյան ֆենոմեն:

Կարող ենք եզրակացնել, որ քաղաքական գիտության մեջ էթնիկ լոբբինգի ինստիտուտը որպես այդպիսին առարկայացնող՝ սույն աշխատանքում ներկայացված բնութագրիչները, ինչպիսիք են հիմնահարցի ձևակերպումը, տեղեկատվության ապահովումը, քաղաքականության մոնիթորինգը, հասարակական կարծիքի համախմբումը, ընտրարշավային գործիքակազմը, պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառումը, ոչ պաշտոնական կապերի գործադրումը, պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգեբանական ճնշման գործադրումը կամ «Lobbing the grassroots» տեխնոլոգիան աբողջապես օգտագործվում են Արևմտյան Եվրոպայի հայկական լոբբիստական կազմակերպությունների կողմից:

Եվրոպայում հայկական էթնիկ լոբբիստական կառույցների կողքին գործունեություն են ծավալում նաև այնպիսի կազմակերպություններ, որոնց կանոնադրական նպատակները թեև չեն ներառում դասական լոբբիստական գործիքակազմ, այնուամենայնիվ դրանք առնչվում են համայնքային կամ Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությանը:

Հայկական լոբբիստական գործունեության արդյունավետության ավելի բարձրացման համար խնդիրներ են հանդիսանում ուղղակի լոբբիստական կառույցների սակավությունը, համայնքների քաղաքական կազմակերպվածության անբավարար մակարդակն ու համապատասխան ներուժի բացակայությունը, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռանկյունու գագաթների դերաբաշխվածության անհստակությունը և այլն:

Геворг Гукасян, О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ. В данной работе рассматривается общее состояние армянского лоббирования в Западной Европе, его влияние на триединство «Родина-диаспора-принимающая страна» и их взаимосвязь как на общеевропейском уровне, так и в отдельных государствах и общинах.

Исследование проводится в свете анализа особенностей армянской диаспоры, основанного на научно-аналитическом аспекте международного опыта и академической литературы в этой области.

Особо упоминается институт этнического лоббирования, подчеркивающий, что подобное исследование изначально предполагает необходимость междисциплинарных подходов в тесном взаимодействии с политологией и диаспорологией. Чтобы оценить лоббистскую активность армянской диаспоры в Европе в ее множественности, рекомендуется рассматривать армянские общественные организации в Европе, так или иначе способствующие служению интересам армянских государств, двумя способами: лоббирование и закрытое лоббирование.

Также предлагается, чтобы Институт этнического лоббирования рассматривался как основное организованное выражение политической роли диаспоры.

Ключевые слова: *диаспора, идентификаторы диаспоры, этническое лоббирование, институт лоббирования, армянское лобби Европы.*

Gevorg Ghukasyan, ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE. The article presents the general situation of Armenian lobby (advocacy) in Western Europe and its impact on the "Homeland-Diaspora-Hosting country" triangle and their interrelations, both at the Pan-European level, as well as with individual states and communities. The task is implemented under the light of the analysis of the characteristics of the Armenian Diaspora, based on the scientific-analytical aspect of the international experience and academic literature in the field

Special reference is made to the institute of ethnic lobbying, stressing that first of all its study implies the need for interdisciplinary approaches, in close interaction with political science and the Diaspora. In order to evaluate the lobbying activity of the Armenian Diaspora in Europe in its multiplicity, it is recommended that Armenian community organizations in Europe, which contribute to the service of the interests of Armenian states, be viewed in two ways: the lobbying and the close-lobbying. It is also suggested that the Institute of Ethnic Lobbying should be seen as the main organized expression of the political role of the Diaspora.

Key words*: Diaspora, Diaspora descriptions, ethnic lobbying, the institute of ethnic lobbying, Armenian lobby in Europe.*